ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 25 - Ա **10 փետրվարի 2017 թ.**

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ 25-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՆՉԵՎ 10, 12, 14 և 16 ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, <<Մանկապատանեկան սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.19-րդ կետերի պահանջներով

որոշում եմ՝

1. Հաստատել՝

   1) Հայկական բանակի 25-րդ տարեդարձին նվիրված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 10, 12, 14 և 16 տարեկան պատանիների շախմատի 2017 թվականի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի

   2) Հայկական բանակի 25-րդ տարեդարձին նվիրված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 10, 12, 14 և 16 տարեկան պատանիների շախմատի 2017 թվականի մարզային առաջնության կանոնակարգը՝ համաձայն N2 հավելվածի.

   3) Հայկական բանակի 25-րդ տարեդարձին նվիրված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 10, 12, 14 և 16 տարեկան պատանիների շախմատի 2017 թվականի տարածքային և մարզային փուլերի անցկացման մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N3 հավելվածի.

2. Կազմկոմիտեին՝
   1) կազմակերպել մրցումների մարզային փուլի բացման և փակման հանդիսավոր արարողություն.
   2) մրցումների ավարտից հետո ներկայացնել գրավոր հաշվետվություն:
3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Անուշ Պողոսյանին՝ Հայկական բանակի 25-րդ տարեդարձին նվիրված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 10, 12, 14 և 16 տարեկան պատանիների շախմատի 2017 թվականի մարզային առաջնության տարածքային և մարզային փուլերի անցկացման օրերին համապատասխան հաստատություններում ապահովել բժշկի ներկայությունը:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2017 թվականի փետրվարի 10 -ի
N 25-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ 25-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՆՉԵՎ 10, 12, 14 և 16 ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ

Բաղալյան Գարիկ – ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/

Գրիգորյան Վաչագան - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Պողոսյան Անուշ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Չիչոյան Հովհաննես - Սարուխան համայնքի ղեկավար /համաձայնությամբ/

Շահբազյան Հասմիկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ

Զարվադարյան Գեղամ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ

Շառոյան Վարազդատ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Թիզյան Հակոբ - ՀՀ Գեղարքունիք մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Օհանյան Տիգրան - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Զազյան Կարեն - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Առաքելյան Ալեքսան-ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ

Գևորգյան Գևորգ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի կրտսեր մասնագետ

Մալխասյան Գոհար. - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի կրտսեր մասնագետ

Հայրապետյան Մերուժան -Հայաստանի շախմատի ակադեմիայի ներկայացուցիչ/համաձայնությամբ/

Խլղաթյան Խոսրով - <<Գեղամա աշխարհ>> թերթի գլխավոր խմբագիր /համաձայնությամբ/

Աշխատակազմի ղեկավար՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N2

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2017 թվականի փետրվարի 10-ի
N 25-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ 25-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՆՉԵՎ 10, 12, 14 ԵՎ 16 ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ

1. ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայկական բանակի 25-րդ տարեդարձին նվիրված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 10, 12, 14, 16 տարեկան պատանիների շախմատի 2016 թվականի մարզային առաջնության /այսուհետ՝ մարզային առաջնություն/ նպատակն ու խնդիրներն են՝

նպաստել

- դպրոցականների շրջանում շախմատ մարզաձևի մասսայական զարգացմանը
- արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների բարելավմանը
- պատանի շախմատիստների մարզական կատարելագործման ապահովմանը
- Հայաստանի պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցումներին մասնակցության ապահովմանը

2. ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Մարզային առաջնության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը: Տարածքային փուլի մրցումները կազմակերպում և անցկացնում են մարզում գործող Հայաստանի շախմատի ակադեմիայի մասնաճյուղերը:

3. ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ , ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Մարզային առաջնությունը կանցկացվի երկու փուլով՝ տարածքային և մարզային: Տարածքային փուլի մրցումները կանցկացվեն 2017 թվականի փետրվարի 15-22-ը, իսկ մարզային փուլի մրցումները՝ 2017 թ. մարտի 4-ին, Սարուխանի Մ.Խոստեղյանի անվան միջնակարգ դպրոցում: Մրցումների սկիզբը ժամը 10:30-ին:

4. ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Մարզային առաջնությանը կմասնակցեն Հայաստանի շախմատի ակադեմիայի Գավառի, Սևանի, Ճամբարակի, Մարտունու, Սարուխանի, Վարդենիսի և Վարդենիկի մասնաճյուղերում անցկացված մրցումներում հաղթող ճանաչված շախմատիստները՝ ըստ տարիքային խմբերի հետևյալ համամասնությամբ. մինչև 10

տարեկաններ՝ 4 տղա, մինչև 12 տարեկաններ՝ 2 տղա, մինչև 14 տարեկաններ՝ 2 տղա, մինչև 16 տարեկաններ՝ 2 տղա և մեկ մրցավար: Ընդ որում՝ մինչ 10 տարեկան պատանիների մրցաշարում մասնակցության իրավունք ունեն առնվազն 3-րդ կարգ ունեցող, մինչ 12, 14 և 16 տարեկան պատանիների մրցաշարում՝ առնվազն 2-րդ կարգ ունեցող շախմատիստները: Թիմի ընդհանուր կազմը՝ 11 մասնակից:

Մարզային առաջնությունը կանցկացվի՝ մինչև 10 տարեկանների խմբում շվեյցարական մրցակարգով, մյուս տարիքային խմբերում՝ շրջանաձև: Մարզային առաջնությունը անհատական է: Յուրաքանչյուր խաղացողի մեկ խաղափուլում տրվում է 15 րոպե ժամանակ՝ յուրաքանչյուր քայլի համար 5 վրկ. հավելումով: Առաջնությունը կանցկացվի ՖԻԴԵ-ի կանոնակարգի համաձայն: Յուրաքանչյուր թիմ պարտավոր է ապահովել իր մասնակիցների թվի կեսի չափով շախմատներ և ժամացույցներ: Մարզային փուլի մրցումները կազմակերպում է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը, իսկ առաջնությունը անցկացնում և արդյունքներն ամփոփում է մրցավարական հանձնաժողովը:

5. ԾԱԽՍԵՐԸ

Պատանի շախմատիստների սննդի և հաղթողների պարգևատրման հետ կապված ծախսերը հոգում է Սարուխան համայնքը, իսկ ճանապարհածախսը՝ գործուղող համայնքները:

6. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

Մարզային առաջնությունում՝ յուրաքանչյուր տարիքային խմբում, 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր գրաված շախմատիստները պարգևատրվում են հուշանվերներով և հավաստագրերով:

7. ՀԱՅՏԵՐԸ

Մարզային առաջնության մասնակցության անվանական հայտերը ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն մինչև փետրվարի 27-ը՝ հաստատված համայնքի ղեկավարի կողմից:

Աշխատակազմի ղեկավար ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N3

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2017 թ. փետրվարի 10-ի
N 25-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ 25-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՆՉԵՎ 10, 12, 14 ԵՎ 16 ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հայրապետյան Մերուժան- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Հայաստանի շախմատի ակադեմիայի ներկայացուցիչ / գլխավոր մրցավար /

Սարգսյան Կարո – Հայաստանի շախմատի ակադեմիայի Գավառի մասնաճյուղի մարզիչ /քարտուղար/

Վարդանյան Աշոտ – Հայաստանի շախմատի ակադեմիայի Սևանի մասնաճյուղի մարզիչ /մրցավար/

Պետրոսյան Մարգարիտ - Հայաստանի շախմատի ակադեմիայի Վարդենիսի մասնաճյուղի մարզիչ /մրցավար/

Մարտիրոսյան Հակոբ – Հայաստանի շախմատի ակադեմիայի Ճամբարակի մասնաճյուղի մարզիչ /մրցավար/

Հայրապետյան Արամայիս - Հայաստանի շախմատի ակադեմիայի Մարտունու մասնաճյուղի մարզիչ /մրցավար/

Արզումանյան Սամվել - Հայաստանի շախմատի ակադեմիայի Վարդենիկի մասնաճյուղի մարզիչ / միցավար/

Թորոյան Գնել - Հայաստանի շախմատի ակադեմիայի Սարուխանի մասնաճյուղի մարզիչ /մրցավար/

Աշխատակազմի ղեկավար ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ